

—ՊԱՏԱՌԻԱՆԻ ՓՈԽԱՆԱԿ—

«Արարատ»-ի ապրել ամսատետրում կարդացի Եղբ. Բարդուղիմէոս Եպիս. Գէորգեանի «Ակամայ պատասխան» յօդուածը, իմ «Մովոէս Խորենացի թէ խորին» յօդուածի առիթով, որ տպուած էր միևնոյն ամսադրի մարտ ամսատետրում։

Սրբազանի ընարանը, «Խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացել» և գըութեան ոճը իրանց մէջ պարունակելով յօդուածի պատասխանը, ինձ աղատում են պատասխանելու հարկից։

Բարդուղիմէոս Սրբազանից ես շնորհակալ եմ, որ իմ վեցաբերութեամբ աւելի մեղք լեզու է բանեցրել քան շատ ուժիչ համբաւաւոր բանասէցների։

Մեր երկուսի յօդուածներն էլ կարդացողները տեսան և կտեսնեն, որ մենք Խորենացու մականուան խնդիրը բոլորովին ուրիշ կերպ ենք ըմբռնել, և Խորենացու Արարատեան դաշտից լինելու համար բոլորովին տարբեր հիմունքներ ենք առաջ բերել, ուրեմն այլոց վաստակը իւրացնելու խօսք կարող չէ լինել և չենք կարծում, որ Խորենացու մասին դրելք ուրբազանը իւր մենաշնորհն է համարում։

Ես իմ յօդուածիս մէջ դրելով՝ «քաւ, այս մոքի երկանց ծնունդն ես ինձ չեմ վերագրում . . . : Ոմանք ևս կտրծիք են յայտնել, որ նա Արարատեան Խոր դաշտի ծնունդ լինելու աղագաւ է կոչուել Խորենացի, այսինքն Խոր դաշտեցի», արդէն ցոյց է տալիս, որ ես երբեք ցանկութիւն չեմ ունեցել իւրացնելու այլոց վաստակը, մանաւանդ Բարդուղիմէոս Սըրբազանի։

Ես իմ յօդուածիս մէջ յանուանել յիշելով Սրբազանի անունը՝ ջանացել էի ցոյց տալ նրա առարկութիւնների տարօրինակութիւնը. ըայց Արարատի խմբագրութիւնը բանակութիւնը բառնալու համար յօդուածից հանեց այդ մասը, առարկելով, թէ ոմանք բառի տակ հասկացւում է, որ ուրիշ տարակուսողներ ևս եղել են Խորենացու կոչնանուան համար. և իմ նոր Ենթադրութիւնը Խորենացու թէ մականուան և թէ Արարատեան դաշտեցի լինելու համար բոլորովին այլ հիմունքներ ունեն։

Թէև Սրբազանի յօդուածը շարունակութեան մէջ է, ըայց ես այս մի քանի տողը գրելու համար հարկ չհամարեցի սպասել վերջանալուն, մանաւանդ որ ոչ այժմ և ոչ շետոյ ցանկութիւն և տրամադրութիւն չունեմ Սրբազանի հետ բանակութիւններ մտնել *։

Սիօն վարդապետ



* Տ. Սիօն վարդապետի սոյն գրութեամբ փակում ենք յարուցուած բանավէճը. Կամ.